ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ XV—XVIII ԴԱՐԵՐՈՒՄ

Պրոֆ. Ս. Ե. ՀԱԿՈԲՅԱՆ

Սկզբնաղբյուրներում հայկական համայնքների մասին պահպանված վկայությունները մեզ հնարավորություն են ընձեռում գյուղական համայնքները ստորաբաժանել չորս հիմնական խմբերի։

Առաջին խմբին պատկանում էին այն համայնքները, ուր համայնական վարելահողերը բաժանվում էին առանձին գերդաստաններին կամ գերդաստանների առանձին անդամներին և տնամերձ հողակտորների, ու տնտեսական-արտադրական այլ պիտույքների հետ ամրացվում էին նրանց՝ ժամանակավոր տիրակալության իրավունքով։

Երկրորդ կարգի համայնքներում վարելահողերի մի մասը բաժանվում և վերաբաժանվում էր համայնքի անդամների միջև ժառանգական սեփականատիրության իրավունքով։ Այս հողաբաժինների վրա առանձին գերդաստաններն իրենց արտադրամիջոցներով և անձնական աշխատանքով կազմակերպում էին սեփական տնտեսություն և ստացած արդյունքներն իրացնում էին որպես մասնավոր սեփականություն։ Երկրորդ խմբին պատկանած այս համայնքները լայն տարածում ունեին երկրի կենտրոնական, սևահողային, արգավանդ, տար կլիմա, ջրի առատ պաշարներ ունեցող այն վայրերում, որտեղ, բացի հացաբույսերից, մշակվում և շուկա էին հանվում նաև տեխնիկական կուլտուրաներ՝ բամբակ, բրինձ, կանեփ, կտավատ և այգեգործության արդյունքներ։

Գյուղական համայնքների երրորդ խումբը լայն տարածում ուներ երկրի լեռնային ու նախալեռնային շրջաններում։ Այս կարգի համայնքներում դեռևս տիրապետող ձևը հողի կոլեկտիվ-համայնական սեփականությունն էր։ Լեռնային ու նախալեռնային այն շրջաններում, որտեղ կային հողային ընդարձակ տարածություններ, բայց սակավաթիվ համայնականներ համայնքի կողմից չկար հողային տարածությունների որևէ սահմանափակում։ Այս վայրերում գյուղական համայնքը, նույնիսկ անհատ գյուղացին կարող էր և իրավունք ուներ մշակելու այնքան հող, որքան թույլ էին տալիս նրա տնտեսական հնարավորությունները։

Հայաստանում շատ ուժեղ ու կենսունակ էր համայնքների չորրորդ խումբը։ Այս տիպի համայնքները կազմավորվում էին երկրի այն մասերում, որոնք մեծապես տուժել և անմարդաբնակ էին դարձել արտաքին և, մասամբ էլ, ներքին արհավիրքների հետևանքով։ Ասենք նաև, որ կենտրոնական ու տեղական իշխանություններն իրենք ևս շահագրգռված էին մարդաբնակ դարձնել ապատ հողերը և անմարդաբնակ գյուղերը։ Երկրի այս մասերում նրանք ներգաղթած բնակչությանը հատկացնում էին հողամասեր, որոշ ժամանակ ազատում պետական ու ֆեոդալական հարկերից ու տուրքերից և թույլատրում կազմակերպել «ազատ» համայնքներ։ Ավելին, այս տիպի համայնքներում

ընդգրկված համայնականը իրավունք ուներ «ըստ սահմանի նախնեաց» օտարել, վաճառել, կտակել, ժառանգել իր հողակտորը, փոխադրվել և բնակություն հաստատել այլ վայրերում ու համայնքներում։ Մխիթար Գոշը, դեռևս իր ժամանակ, նորաստեղծ համայնքների մասին սահմանել էր «Յաղագս դատաստանաց գեղից նորոգապէս շինողաց» կանոնը, որտեղ օրենսդիրն ասում է, որ եթե համայնք-գյուղը նոր է ստեղծվել, ապա «չէ հաստատուն բաժանումն հողոյն և ջրին և այլոց այսպիսեաց մինչ բաւական բնակիչք ժողովեսցին»։ Ավելի ուշագրավ է կանոնի վերջին մասը։ Այստեղ սահմանված է, որ եթե որևէ պատճառով գյուղ-համայնքը քայքայվել էր ու նրա բնակիչները լքել էին իրենց բնակավայրը, իսկ հետո վերադարձել և վերականգնել էին շենը, ապա յուրաքանչյուր համայնական իրավունք ուներ «ըստ սահմանի նախնեաց» տիրակալելու իր հողաբաժինը։ Իսկ եթե գյուղ-համայնքը «բազմաժամանակեայ իցէ» անմարդաբնակ և նրա բնակիչները կրկին հավաքվել և վերականգնել են գյուղը, բայց տիրության փոփոխության կամ «անգիտելի» պատճառներով հողատիրության սահմանները խառնվել են, ապա համայնքներին իրավունք է վերապահվում «նորոգ արասցեն» հողաբաժանումը և այն էլ «հաւասարադատութեամբ»։ Նախքան հողի հավասար բաժանումը, որոշ մաս պետք է առանձնացվեր գյուղի եկեղեցուն, մի ավելի մեծ մաս էլ հանձնվեր նրան, ով «գլխաւորն իցէ գեղջն, վասն հոգալոյ զայլս»[1]։ Մխիթար Գոշը միաժամանակ իրավունք է վերապահում նորաստեղծ գյուղ-համայնքը որոշ ժամանակով հոչակել ապահարկ։ «Նոր շինեալ տեղեաց, —սահմանել է նա,— աղատութիւն լիցի, մինչ զի ամենայնի հաստատիցի»[2]։ Ուշագրավ է, որ Մխիթար Գոշի կողմից մշակված և օրենք դարձած այս կանոնը իր ուժը պահպանում է նաև հետագա դարերի ընթացքում։

Ահա մեզ հայտնի բազմաթիվ փաստերից միայն մի երկուսը։ Ադրբեջանի վիլայեթի Թումանե-Նախչևանի օլքայի և այլ վայրերի «բարձրաստիճան, արդարամիտ» մարդկանց վկայությամբ 1506 թ. կազմված մի հրովարտակից պարզվում է, որ Ադրբեջան երկրի Թումանե-Նախչևանի Դարաշամբի գյուղերից Դիբքյանդ կոչվող գյուղը «... իր բոլոր ենթակա և կից վայրերով, հավելյալ և վերաբերող ամեն ինչով, հողերով, դաշտերով, բլուրներով, լեռներով, տափարակ վայրերով, առուներով և ջրանցքներով, ջրաղացներով և ձիթհանքերով, արոտավայրերով և խոտհարքերով, ոչխարների մակաղատեղերով, երեխաների խաղատեղերով և ծերունիների հավաքատեղիներով, հիշատակված և չհիշատակված, անվանված և չանվանված ներքին և արտաքին ամեն ինչով...» պատկանում է Դիբքյանդ գյուղի քրիստոնյա համայնքին, որպես նրա «զուտ հարստությունն ու անխառն և անբաժան սեփականությունը», որպես նրա մուլքը և սկսած հին ժամանակներից մինչև այժմ գտնվում է նրանց (ռայաթների) տիրապետության տակ և «նրանց շարիաթական հաստատուն սեփականության ներքո, և ոչ ոք, վերը սահմանագծված վայրի նկատմամբ երբեք, ոչ մի դեպքում և ոչ մի նպատակով... ոչ մի իրավունք, բաժին կամ մաս, պահանջ կամ վեճ չունի և չի կարող ունենալ»[3]։ XVI դարի սկզբին կազմված

---

1 Մխիթար Գոշ, Դատաստանագիրք Հայոց, Վաղարշապատ, 1880, էջ 415։

2 Նույն տեղում, էջ 318։

3 «Մատենադարանի պարսկերեն կալվածագրերը», կազմեց Հ. Դ. Փափազյան, I, Երևան, 1968, էջ 94—97։

մեկ այլ կալվածագրում արձանագրված է, որ Դարաշամբի մահալի հայկական Դիզբյանդ, Ռաշքյանդ և Օրթաքյանդ գյուղերը նույնպես իրենց «ամենայն սահմանօքն» պատկանում էին նույն գյուղերի համայնքներին։ Շահ Իսմայիլ I-ը այդ գյուղերի հողերը, կալվածքները հաստատում է նույն գյուղերի համայնքների վրա, որպես նրանց ժառանգական մուլքերը[4]։ Պայքարը գյուղական համայնքների և հողատեր-ֆեոդալների միջև ավելի է բորբոքվում 1650—1670-ական թթ.։ 1658 թ. ոմն Միր-Սաֆի Գաջչի փորձեր է անում բռնագրավել Դիզբյանդ գյուղի մեկ դանկ մուլքը։ Հզգևոր ֆեոդալի այս արարքի դեմ բողոքում են արդեն 3 գյուղերի համայնքները։ Սրանք դիմում են շահ Աբբաս Բ-ին. շահը հրամայում է տեղում ստուգել և արգելել Միր-Սաֆի Գաջչուն միջամտել գյուղի ներքին գործերին։ Սակայն 1668 թ. գյուղերի բնակիչները կրկին բողոքում են նույն ֆեոդալի ապօրինի արարքների դեմ։ Այժմ էլ շահ Սուլեյմանը հատուկ ֆերմանով երրորդ անգամ հաստատում է ռայաթների իրավունքն իրենց գյուղերի վրա և հրամայում, որ նրանք, բացի Դիվանի օգտին գանձվող բահրաչեից, այլ հարկեր չպետք է վճարեն՝ ո՛չ Թավրիզի մզկիթին, և ո՛չ էլ հոգևորականներին։ Ավելին, շահ Սուլեյմանը հաստատում է իր նախորդների կալվածագիր-շնորհագրերը և երեք գյուղերն ու նրանց պատկանած բոլոր վայրերը ճանաչում է որպես ռայաթների սեփական մուլքեր[5]։ Պայքարը, սակայն, այսքանով էլ չի ավարտվում։ 1701 թ. հանդես է գալիս ոմն Միրզա Աղասի։ Թավրիզի մզկիթի անունից նա բողոքում է Նախիջևանի գավառական դատարանին և ջանում ապացուցել, որ վերոհիշյալ երեք գյուղերը միշտ էլ հանդիսացել են մզկիթի վախմային գյուղերը և պարտավոր են յուրաքանչյուր տարի 7-ական թուման հարկ վճարել մզկիթին։ Այս վեճը շարունակվում է մինչև 1717 թ.։ Այդ թվականին Թավրիզի մզկիթի ոտնձգությունների դեմ վերստին բողոքում են վերոհիշյալ երեք գյուղերի ռայաթները։ Ուշագրավ է, որ այս բողոքագրի տակ ստորագրում են ոչ միայն 3, այլ բազմաթիվ գյուղերի հայ և ադրբեջանցի ռայաթներ, առևտրականներ, արհեստավորներ։ Նրանք վկայում են, որ վերոհիշյալ գյուղերը երբեք մզկիթին չեն պատկանել, նրան հարկեր չեն վճարել, այլ պատկանել են ռայաթներին[6]։

Ոչ միայն պարսկական հրովարտակներում ու կալվածագրերում, այլև մեր մատենագիրների մոտ պահպանվել են նույնանման շատ փաստեր։ Այսպես. Աբրահամ Կրետացին բերում է հետևյալ ուշագրավ փաստը։ Մեր ժամանակ, գրել է նա, «գիւղ կայր ի ստորոտ բլրին, և էր աւերակ ի բազում ժամանակաց՝ որպէս պատմէին Ճ (100) ամեն ի վեր, զայն գիւղն քննեալ և գրեալ գիւղականս, եւ նոցա (Թահմազ խանը) ռախամ մի զի մաֆ լիցի և ՇՃ (800) սոմարի ցան եւ վարեսցեն. և պահրայ, որ է օշուր՝ մի տայցեն։ Որ և վաղվաղակի շինեցին զգիւղն, և կան այժմ բնակեալ գիւղականք[7]։

Սիմեոն Երևանցին հավաստում է, որ Գրիգոր Մակվեցի կաթողիկոսը Ամիր Ռուստամից գնում է Մուղնի գյուղի 6 դանկ մուլքերը։ Ավելի ուշ այս գյուղը վանքից խլում և միմյանց են վաճառում զանազան աշխարհիկ ֆեոդալներ։ 1759 թ. Հակոբ Շամախեցի կաթողիկոսից «ծածուկ», ոմն Աղեքսանդր

[4] Մաշտոցի անվ. Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, թղթ. 4, վավ. 85։

[5] Նույն տեղում, վավ. 130։

[6] Նույն տեղում, թղթ. 1զ, վավ. 27։

[7] «Աբրահամ Կաթողիկոսի Կրետացւոյ Պատմագրութիւն անցիցն իւրոց և Նադր-Շահին պարսից», Վաղարշապատ 1870, էջ 22։

վարդապետ գյուղի մուլքը որպես «կաշառ» նվիրում է Երևանի Հուսեին Ալի խանի նաղիր Իբրահիմ աղային։ Նոր հողատեր-ֆեոդալը մուղնեցիներին այնպիսի ծանր պայմանների մեջ է դնում, որ սրանք ստիպված լքում են գյուղը և գալիս ու բնակություն են հաստատում «ի մէջ պարսպի վանիցն սրբոյն Գեորգայ քսան ամաւ աւելի...»։ 1768 թ. Սիմեոն Երևանցին վերստին տեղահան է անում մուղնեցիներին և փոխադրում է «ի ընիկ գեօղն իրեանց Մուղնի՝ տալով զխարճս և զփայտս իրեանց ծախուցն և տնաշինութեան»[8]։

Որ սեփական, ժառանգական ու օտարելի մուլք-գյուղերը տարբերվում էին գյուղական համայնքներից և հարկապարտ գյուղերից՝ պարզորոշ երևում է «Ջամբռի» հեղինակի բերած բազմաթիվ ուշագրավ փաստերից։ Այսպես, նա բոլոր դեպքերում Վաղարշապատ գյուղը համարում է վանքի անքակտելի սեփականությունը և նրա մասին խոսելիս միշտ էլ ասում է. «մեր գեղջս», «գեօղս մեր», «ի գեօղս մերոյ» և այլն, իսկ մյուս գյուղերի մասին խոսելիս ասում է, թե այս կամ այն գյուղի որքա՞ն դանկ մուլքն էր, որ պատկանում էր վանքին, իսկ քանի՞ դանկերն էին, որ պատկանում էին այլ անձերի կամ իրեն՝ համայնքին։ Այս առումով հույժ այժեքավոր է Օշական գյուղի պատմությունը։ Հայտնի է, որ Օշական գյուղի 6 դանկ մուլքը, սկսած Փիլիպոս կաթողիկոսի ժամանակից, պատկանում էր վանքին։ Սակայն Աստվածատուր կաթողիկոսի օրոք այս գյուղի համայնքը նյութական այնպիսի անելանելի վիճակում էր գտնվում, որ «գեղովի մէկ» գալիս և դիմում են կաթողիկոսին ու խնդրում 150 թուման փոխ։ Համայնքի և կաթողիկոսի միջև կնքվում է «զհաստատուն զապալայ մի», որտեղ արձանագրվում է, որ գյուղի բոլոր հայ բնակիչները իրենց հոժար կամքով և ցանկությամբ պարտավորվում են իրենց գյուղի «ամենայն հասից և սերմանաց» արդյունքներից վանքին որպես մուլք վճարել ոչ թե տասանորդ, այլ «հնգէն մէկն»։ Հետագա շարադրանքից պարզվում է, որ 150 թուման փոխը չի ծածկում գյուղի կարիքները։ Ալեքսանդր կաթողիկոսի օրոք Օշականի համայնքը մեծապես տուժում է բնական աղետներից ու այլ արհավիրքներից և 1780 թ. հարկադրված դիմում է սհաթլուցի Միրզա Մուհամեդին և Հաջի Մուհամեդ Հուսեինին, ստանում 180 թուման, որի դիմաց որպես գրավ դնում է համայնապատկան 20 այգի և 5 ջրաղաց։ Այդ օշականցի «կարի չքաւորեալ և ի նեղ անկանեալ» բնակիչները ստիպված դիմում են նաև երևանցի խոջա Փանոսի որդի խոջա Մովսեսին, ստանում են 150 թուման ու գրավ դնում 9 այգի և 12 ջրաղաց։

Աստվածատուր Համադանցի կաթողիկոսը, ասում է Սիմեոն Երևանցին, այլևս չէր կարող հանդուրժել, որ «զուրթեն զայնքան այգիսն և ջրաղացսն խոջայ Մովսէսն և յիշեցեալ տաճիկքն»։ Խոջա Մովսեսին վճարելով 75 թուման, նա ետ է ստանում 9 այգին և 12 ջրաղացը, իսկ «տաճիկներին» վճարելով 55 թուման, ետ է ստանում 20 այգին և 5 ջրաղացը։ Կաթողիկոսը գումարը պակաս է վճարում, որովհետև և՛ «տաճիկները», և՛ Մովսեսը «յայնքան յամս կերեալք էին... զայնքան մաս մուլքս»[9]։

Այս փաստերը ցույց են տալիս, որ համայնքը դեռևս աղատորեն տնօրինում էր իր տրամադրության տակ եղած մուլքերը։ 1677 թ. շահ Սուլեյմանի

---

8 «Ջամբռ դիրք որ կոչի յիշատակարան արձանացուցիչ, հայելի և պարունակող բնաւից որպէսութեանց Սրբոյ Աթոռոյս և իւրոյ շրջակայից վանօրէիցն», Վաղարշապատ, 1873, էջ 118—119։

9 Նույն տեղում. էջ 111—112, 174—175։

կողմից Հակոբ Ջուղայեցի կաթողիկոսին շնորհված հրովարտակից ակնհայտ է դառնում, որ Վաղարշապատ գյուղի համայնքը, իբր իր «կամքով» և այն էլ «հաւիտեան, իր բոլոր օրինական և հասարակական... ենթակա և կից վայրերով» գյուղը վախմ է անում էջմիածնի վանքին՝ «առ ի սեփականութիւն»։ Այս փաստն ուշագրավ է նաև մեկ այլ առումով։ Պարզ է դառնում, որ Վաղարշապատ գյուղի համայնքն իր «հոժար» կամքով վանքին է հանձնում ոչ միայն հարկ-ռենտա գանձելու մենաշնորհը, այլև ամբողջ գյուղի ու նրան ենթակա բոլոր վայրերի տնօրինության իրավունքը[10]։ 1740 թ. Քանաքեռ գյուղի համայնքը Գեղարդի վանքին վաճառում է 200 սոմարի տեղ վարելահող։

Մի շարք փաստեր ցույց են տալիս, որ վարելահողերի, ինչպես և «բահաբերան» կամ «գլուխ» ջրերի առքից և վաճառքից առաջ վաճառողը և գնողը պարտավորվում են այսուհետև ևս կատարել համայնքի կողմից իրենց վրա դրված բոլոր պարտավորությունները։ Որ մեր քննարկման ենթակա ժամանակաշրջանում առանձին համայնականն իրավունք է ունեցել օտարել, վաճառել, գնել, ժառանգել ոչ միայն իր հողաբաժինը, այլև «գլուխ» կամ «բահաբերան» ջուրը՝ ցույց են տալիս հետևյալ փաստերը։

1679 թ. ոմն Համասփյուռ և Հուռիկ իրենց «կամովն և սրտի յօժարութեամբ» Նախավկայի վանքի առաջնորդ Միքայելին վաճառում են իրենց «հայրենիք... ընձանատափի արտն... հինգ թումանի»[11]։ 1701 թ. ոմն Համազասպ պարոն Գասպարին վաճառում է իր «հայրենիք... արտն... մեկ թումանի»։ Վաճառողի և գնողի միջև կնքված կալվածագրում նրանք արձանագրում էն. որ այսուհետև ոչ ոք «ո՛չ որդոց և ո՛չ դստերոց, ո՛չ թոռանց և ո՛չ ծոռանց, ո՛չ եղբօր և ո՛չ քվեր» իրավունք չունեն խախտելու վաճառողի կամքը կամ բռնագրավելու վաճառված հողերը[12]։

Սիմեոն Երևանցու մոտ ևս պահպանվել են մի շարք փաստեր այն մասին, որ համայնքը, առանձին համայնականները իրավունք են ունեցել վաճառել իրենց հողակտորները, այգիները, ջուրը։ 1718 թ. ասում է նա, Աստվածատուր կաթողիկոսը 25 թումանով Ալիբեկլու «գեօղականացն» «իւրաք սահմանաքն» գնում է «լաւ ջրաւէտ բերրի և խոտաւէտ» այն հողերը, որտեղ մինչև վաճառքը գյուղացիները ցանում էին չալթուկ և ունեին բոստաններ[13]։ Սիմեոն Երևանցին բերում է բազմաթիվ փաստեր այն մասին, թե երբ և ում կողմից Էջմիածնի և Երևանի խանության վանքերին են վաճառվել հողեր, այգիներ, ջրաղացներ, ձիթհանքեր և նույնիսկ ջուր[14]։ Այսպես, օրինակ, 1712 թ. Վաղարշապատ գյուղի բնակիչներ՝ Ավետիք Գթակկարյանցու Տիրատուր, Եղիազար և Միքայել որդիները վանքին վաճառում են իրենց հայրենական այգու մի մասը։ 1737 թ. Նորագավթեցի Բարդուղիմեոսը նույն վանքին վաճառում է 5 սոմար (մեկկեկես հեկտար) հողամաս։ Սիմեոն Երևանցու մոտ պահպանված բոլոր փաստերից ամենից ուշագրավն այն վկայությունն է, ուր ասված է, թե վանքը ինչպիսի ճանապարհներով էր ձեռք բերում գյուղեր, այգիներ և «այ-

10 Նույն տեղում, էջ 158, 169։ Կաթողիկոսական Դիվան, թղթ. 1բ. վավ. 156ա. բ. գ։

11 «Կալվածագրեր և տնտեսական այլ գործարքների վերաբերյալ արխիվային վավերագրեր», պրակ 1, առաջաբանով, ծանոթագրություններով և բառարանով, կազմեց Հար. Աբրահամյանը, Երևան, 1941, էջ 30։

12 Նույն տեղում, էջ 43։

13 «Ջամբռ», էջ 160։

14 Նույն տեղում, էջ 99—101։

լոց այսպիսեաց» շարժական ու անշարժ կայքեր։ Կաթողիկոսը, մեկ առ մեկ թվարկելով վանքապատկան անշարժ ու շարժական ողջ կայքը, գրել է, որ այս բոլորը «սուրբ Աթոռը» ստացել էր «թէ դրամատուութեամբ... և թէ վախմատուութեամբ տերանցն տրեցեալք»[15]։

Արդեն նշվեց, որ էջմիածնի վանքը գնել էր ոչ միայն Օշական գյուղի այգիներն ու ջրաղացները, այլև նրա վարելահողերի մի մասը։ «Դարձյալ,— կրել է Երևանցին,— ՝Օշականու գեօղացիքն (այսինքն՝ համայնքը— Ս. Հ.) զվարելահողս ունեին ի վերին ծայր դաշտիս մերոյ ի հիւսիսակոյսն ի գլուխ Սոլաղուրսուն գեղջն։ Եւ այս հողոյս աղագաւ ևս յատուկ ջուր ունին... ապա ի ՌՃԼԴ թուոջն տաճկաց (1723—1724 թթ.) զայս ջուրս երից բաժնեաց, զմին բաժինն ծախեն Աստուածատուր կաթողիկոսին ինն թումանի և հինգ հազար դիանի»[16]։

Կան նաև շատ փաստեր այն մասին, որ համայնքի համաձայնության դեպքում համայնքը, նրա առանձին անդամը իրավունք են ունեցել վաճառել ոչ միայն հողակտորները, այլև իրենց բաժին ջուրը։ 1681 թ. ոմն Նունուֆար արձանագրել է տալիս, որ ինքն իր Սիմոն որդու հետ վաճառում է «մին գլուխ Ս՝ակարի գահրէզի ջուրն, օրն ուրբաթ, սուրբ Նախավկայի առաջնորդ Յոհան վարդապետին տասն և վեց հազար դիանի համփայի համաձայնութեամբ»[17]։ Ոմն Շողեր 1751 թ. արձանագրել է տալիս, որ ինքն իր կամքով վաճառում է իր ամուսնուց ժառանգություն ստացած «Բ գլուխ ջուրն... համբէնոց գիտութեամբ»[18]։ 1754 թ. ոմն Աստվածատուր թողնում է գիր և հիշատակում, որ ինքը 800 դինարով վաճառում է իր «հալալ ժառանգութիւն... Բ բաժին ջուրն... ամենայն համբէնոց գիտութեամբ կամ վկայութեամբ»։ «Մին օր» կամ «Ա, Բ, Գ, Դ բաժին» կամ «չորս գլուխ» ջրեր վաճառում են Մահմեդը, Աստվածատուրը, Շահենը, Ղազարը և ուրիշներ։ Առքի ու վաճառքի բոլոր կալվածագրերում թե՛ վաճառողը, և թե՛ գնողը արձանագրել են տալիս, որ առքն ու վաճառքը միշտ էլ կատարված է եղել «համփոց» կամ «համբէնոց» համաձայնությամբ և ոչ որ իրավունք չունի խախտելու այն[19]։

Սկզբնաղբյուրներում պահպանված և օրենքի ուժ ստացած արտահայտությունները, թե ով «հողս հատանիցէ ի մայրեաց՝ ստացած լիցի անփոփոխ որդւոց նոցա յետ մահու» կամ՝ «իւրաքանչիւր ըստ սահմանի նախնեաց կալցի» իր հողաբաժինը, հաստատում են այն գրությունը, որ վարելահողերը, այգիները և տնամերձ հողերը աստիճանաբար դառնում էին համայնքի առանձին անդամների ժառանգական սեփականությունը։

Այսպիսով, գյուղական ինքնաբավ, իր անդամների արտադրական և տեբիտորիալ-տնտեսական կապերի վրա խարսխված համայնքն իր ներքին կառուցվածքով, իրավունքներով և պարտավորություններով, հողատերերի և ֆեոդալական պետության հետ ունեցած հարաբերություններով տարբերվում էր նախավանդ, միայն արյունակցական և աղգակցական կապերի վրա խարբսխված նահապետական համայնքներից։ Նմանօրինակ տարբերություններ նկատել

---

15 Նույն տեղում, էջ 253։
16 Նույն տեղում, էջ 194։
17 «Կալվածագրեր...», էջ 112—113։
18 Նույն տեղում, էջ 115։
19 Նույն տեղում, էջ 112—115։

են մարքսիզմ-լենինիզմի կլասիկները։ «Ամենից առաջ,—գրել է Կ. Մարքսը,— բոլոր, ավելի վաղ նախնադարյան համայնքները հանգչում էին իրենց անդամների արյունակցական կապերի վրա։ Խզելով այդ ուժեղ, բայց նեղ կապերը, գյուղական համայնքն ընդունակ է ավելի ընդլայնվելու և դիմանալու օտարների հետ ունեցած շփմանը»[20]։ Ավելին, եթե նախնադարյան համայնքում առկա էր միայն հանրային, ապա գյուղական համայնքում՝ և՛ հանրային, և՛ մասնավոր սեփականությունը։

Գյուղական համայնաձևի տիրակալության ժամանակաշրջանում հանրային սեփականություն էին հանդիսանում վարելահողերը, ջրի պաշարները, արոտավայրերը, անտառները, ձկնորսարանները, արտադրական-տնտեսական բնույթի եկամտաբեր ձեռնարկությունները։ Վարելահողերը պարբերաբար, և այն էլ «ըստ մարդաթվի» և «ըստ գլխի», բաժանվում և վերստին վերաբաժանվում էին այն հաշվով, որ յուրաքանչյուր համայնական, համայնքի մեջ ընդգրկված յուրաքանչյուր գերդաստան արդեն ուներ իր և իր ընտանիքի անձնական աշխատանքի և սեփական արտադրամիջոցների վրա հիմնված մասնավոր տնտեսությունը։ Մասնավոր տնտեսությունից ստացած եկամուտների տնօրինության իրավունքը նույնպես պատկանում էր առանձին տնտեսատիրոջը։ Գյուղական համայնքում առկա նյութական ու սոցիալական այս շերտավորումները հանդիսացան համայնքի քայքայման գլխավոր պատճառներից մեկը։

Համայնքների քայքայման պրոցեսում ոչ պակաս դեր էին խաղում արտաքին անբարենպաստ պայմանները՝ հարատևող պատերազմական գործողությունները, ռազմական արշավանքները, ասպատակությունները։ Սակայն քայքայման ենթակա համայնքները շատ հաճախ, Մարքսի բառերով ասած, վերականգնվում են «միևնույն ձևով... միևնույն տեղում, նույն անունով»[21]։ Այս պարզ ձևի մեջ է ընթացել, շարունակում է Մարքսը, «երկրի բնակիչների կյանքը անհիշելի ժամանակներից»։

Առանձին գյուղերի սահմանները այս պայմաններում էլ «հազվադեպ էին փոփոխվում. և թեև գյուղերը երբեմն ավերվում և նույնիսկ վերջնականապես ամայանում էին պատերազմի, սովի կամ համաճարակների հետևանքով, այնուամենայնիվ, նրանք նորից վերականգնվում էին նույն անուններով, նույն սահմաններում, միևնույն շահերով...։ Պետության կործանումը կամ բաժանումը քիչ էր անհանգստացնում գյուղի բնակիչներին... Նրանց համար նշանակություն չունի թե նա ո՞ւմ իշխանության տակ է ընկել, և ո՞ր իշխանին պետք է հպատակվի. նրանց ներքին տնտեսական կյանքն անփոփոխ է մնում»[22]։ Այս երևույթը մենք նկատում ենք նաև Հայաստանում։ Այստեղ ևս ինքնաբավ գյուղական համայնքներն իրենց գոյությունը պահպանեցին օսմանյան ու պարսկական տիրակալության ողջ ժամանակաշրջանում։

Ճիշտ է, պատմական այս ժամանակաշրջաններում քայքայվում են գյուղական համայնքները, խախտվում են համայնքների ներքին կյանքը, հողատիրության ձևերը, սեփականության իրավունքը, սակայն գյուղական համայնքները շարունակում են իրենց գոյությունը։ Ավելին, շատ դեպքերում նրանք

---

20 Կ. Մարքս և Ֆ. Էնգելս, Сочинения, т. XXVII, էջ 680—681, 694—695։

21 Կ. Մարքս, Կապիտալ, հատ. I, Երևան, 1954, էջ 377—378։

22 Նույն տեղում, էջ 378, ծան. 61։

հանդես են գալիս որպես ինքնուրույն կազմակերպություններ և տնօրինում են իրենց անդամների ճակատագիրը։ Գյուղական համայնքները դեռևս մնում են որպես ինքնիշխան մարմիններ և կարգավորում են հողային ու ագրարային հարաբերությունները, կատարում են հողային ու ջրային ֆոնդերի հաշվառում, բաժանում և վերաբաժանում, հանդիսանում են համայնքի և պետության, համայնականների և հողատեր-կալվածատերերի հարաբերությունները կարգավորող օղակներ։

Ասենք նաև, որ պետությունը, նրա տեղական իշխանության մարմինները և հողատեր-կալվածատերերը ամեն կերպ ջանում էին պահպանել գյուղական համայնքը, որը ոչ միայն տնօրինում էր հողերը, այլև բաշխում և գանձում էր համայնականների վրա դրված հարկերն ու տուրքերը, կազմակերպում էր ֆեոդալական պարհակները և իր վրա էր կրում կոլեկտիվ աշխատանքների պատասխանատվությունը։ Պետությունը և հողատեր կալվածատերերը շատ հաճախ չէին խառնվում համայնքի ներքին գործերին, եթե նա ժամանակին վճարում էր պետության ու կալվածատերերի օգտին գանձվող հարկերն ու տուրքերը և կատարում ֆեոդալական պարհակները։

Այս պայմաններում առանձին համայնականներ աստիճանաբար օտարելի ու ժառանգական տիրույթների էին վերածում ոչ միայն տնատեղերն ու տնամերձ հողերը, այլև իրենց անձնական աշխատանքով, սեփական միջոցներով մշակած այգիները, հանդերը և առանձնապես խամ ու խոպան այն հողերը, որոնք դարձվում էին մշակելի։ Ավելին. այժմ խախտվում էին նաև տնտեսական փոխօգնության կապերն ու հարաբերությունները ոչ միայն առանձին համայնքների, այլև միևնույն համայնքի առանձին անդամների միջև։ Որոշ համայնքներ ու համայնականներ արդեն սկսում են առանձին-առանձին մշակել իրենց հատկացված հողերը և, պետական ու մասնատիրական հարկերն ու տուրքերը վճարելուց հետո, իրավունք են ստանում տնտեսությունից ստացած արդյունքները տնօրինել այնպես, ինչպես իրենք են ցանկանում։ Համայնքների, նրա առանձին անդամների միջև տնտեսական կապերի և հարաբերությունների այս խախտումներն իրենց հետ բերում են նաև համայնքների հին, օրենքի ուժ ստացած սովորույթների, վարչական ու կառավարչական կարգի և հարաբերությունների անկում, որոնց փոխարեն հանդես են գալիս նոր սովորույթներ, կապեր ու հարաբերություններ։

Այժմ արդեն համայնքների ու համայնականների միջև խախտված տնտեսական կապերին փոխարինելու են գալիս համայնքների մեջ ընդգրկված առանձին ծխերի, գերդաստանների միջև ստեղծված տնտեսական նոր կապեր և ավելի սերտ հարաբերություններ։ Նախ համայնքը, համայնաժողովն ստիպված առանձին գերդաստանների և նույնիսկ առանձին համայնականների սեփականություն են ճանաչում անձնական աշխատանքով և սեփական միջոցներով մշակված և շրջափակված հողահանդակները, այգիները, տնամերձ հողերը։

Բացի այդ, եթե մինչև նոր հողաբաշխումը առանձին համայնականն արդեն շրջափակել էր իր հողակտորը, մշակել այն, այգի գցել ու ծառեր տնկել, ապա համայնքն այս կարգին պատկանած հողարաժինները համարում էր մշակողի մասնավոր սեփականությունը։

Համայնքը և առանձին համայնականները խորապես գիտակցում էին, որ յուրաքանչյուր 2—3 տարին մեկ անգամ հողերի բաժանումն ու վերաբաժա-

նումը աննպատակահարմար է, որ այս դեպքում ժամանակավորապես հող ստացած գյուղացին շահագրգռված չէ մշակել իրեն հատկացված հողը, նրա վրա ծախսել սեփական աշխատանք և ներդնել միջոցներ։ Այս էր հիմնական պատճառը, որ համայնքն իր անդամներին հողը բաժանում էր ավելի երկար ժամանակով։ Չնայած այս սովորությունը տնտեսապես շահավետ էր, քանի որ երկար ժամանակով հող ստացած գյուղացին ավելի լավ էր մշակում այն, բայց այս ձևով բաշխված հողն աստիճանաբար դառնում էր մշակողի ժառանգական տիրույթը։

Համայնքի կյանքում դեռևս մեծ դեր էր խաղում համայնաժողովը, որը հաստատում էր հողի և ջրի բաժանման կարգը, ընտրում էր գեղջավագներ ու տանուտերեր։ Սովորաբար, բացի արտակարգ դեպքերից, համայնաժողովները գումարվում էին տարին երկու անգամ՝ վաղ գարնանը, երբ նոր էին սկսում դաշտային աշխատանքները, և ուշ աշնանը՝ բերքահավաքը ավարտելուց հետո։ Համայնաժողովն ուներ գործունեության լայն շրջանակ. նա քննարկում և հաստատում էր հողային ու ջրային ֆոնդերի բաժանման և վերաբաժանման, հարկերի, տուրքերի նշանակման ու գանձման, ֆեոդալական պարհակների կազմակերպման հարցերը։ Նրան իրավունք էր վերապահված կարգավորելու հարևան համայնքների հետ չլուծված հարցերը, վարձակալելու հողեր, արոտավայրեր, մարգագետիններ՝ եթե համայնքը սրանց կարիքն ուներ։ Համայնաժողովն իրավունք ուներ լուծել իր անդամների միջև ծագած վեճերը, պատժել հանցապարտ համայնականներին, սահմանել կատարված հանցանքների տեսակները, որոշել պատժի չափերը։ Համայնաժողովները, եթե այնտեղ քննարկվում էին ագրարային կամ համայնքին հուզող սոցիալական հարցեր, հաճախակի տևում էին օրեր, շաբաթներ և նույնիսկ ամիսներ։ Համայնաժողովը սովորաբար գումարվում էր գյուղի հրապարակում կամ եկեղեցու բակում։ Հարցերը քննարկվում էին այնքան ժամանակ, մինչև հակառակորդ կողմը համաձայնվում էր կամ զիջում։ Քիչ չէին դեպքերը, երբ համայնաժողովը բաժանվում էր առանձին խմբերի կամ թևերի՝ տանուտերերի, վերիլների կամ ջրավարների ղեկավարությամբ։ Բացի այս վարչական պաշտոնյաներից համայնքներն ունեին նաև դատական ու վարչական մարմիններ, որոնք նույնպես ընտրովի էին։ Սակայն այս մարմինները չունեին գործունեության որոշակի բնագավառներ. նրանք զբաղվում էին ամեն ինչով։

Համայնքում ավելի լայն իրավունքներ ունեին գեղջավագները, որոնք ընտրվում էին հայտնի տոհմերից և նրանց պաշտոնը շատ հաճախ դառնում էր ժառանգական։ Գեղջավագները ոչ միայն կառավարում էին համայնքի գործերը, այլև հանդիսանում էին միջնորդներ՝ խաների, մուլքադար-թիուլդարների և համայնքի միջև։ Նրանք պարտավոր էին հետևել ու հսկել, որ համայնականները կատարեն իրենց պարտավորությունները. նրանք լիազորված էին նաև՝ պատժելու խոովարար համայնականներին, համայնքի ներսում պահպանելու անդորրություն, կարգավորելու հարևան համայնքների հետ ունեցած վեճերը, հսկելու և պահպանելու ճանապարհները, կամուրջները, հասարակական ու պետական նշանակություն ունեցող այլ կառույցները։ Նրանք պարտավոր էին ընդունել, ապաստան, սնունդ և «փիշքյաշներ» մատակարարել իրենց գյուղը այցի եկած պետական պաշտոնյաներին և սրանց մարդկանց։

Քանի որ համայնքի, գեղջավագի և համայնաժողովի համար ամենակարևորը հողային հարցն էր, ավելորդ չենք համարում ավելի հանգամանորեն

կանգ առնել այս խնդրի վրա։ Արդեն նշվեց, որ գյուղական համայնքը հանդիսանում էր տնտեսական մի ամբողջություն. նրա տնօրինության տակ էին գտնվում իր սահմաններում եղած հողային և ջրային բոլոր ֆոնդերը։ Նախքան հողերի բաշխումը կամ վերաբաշխումը, հողերը բաժանվում էին երկու մասի. մեծ մասը թողնվում էր համայնքի տնօրինության տակ, իսկ մնացածը «ըստ մարդաթվի» կամ «ըստ գլխի» բաժանվում էր համայնքի անդամների միջև։

Վարելահողերը բաշխելուց առաջ հաշվի էին առնվում բոլոր հողերը, որոշվում ոչ միայն նրանց տեսակները, որակը, բերքատվության աստիճանը, այլև մոտիկությունը բնակավայրին, ճանապարհներին կամ ջրային պաշարներին։ Հողերը հաշվի առնելուց ու չափելուց հետո կազմվում էր հատուկ մատյան, որտեղ գրանցվում էին համայնականի անունը, նրա ընտանիքի անդամների թիվը, նրանց հատկացվելիք հողի չափերը, վարելահողի վայրի անունը և այլն։ Համայնքը իր տնօրինության տակ եղած հողերը բաշխելուց առաջ այն բաժանում էր 4 հիմնական խմբերի և միշտ էլ հաշվի էր առնում հողի որակը։ Այսպես, առաջին խմբի մեջ մտնում էին բերքատու, ջրարբի տարածությունները. այս խմբին պատկանած հողերը հատկացվում էին ավելի քիչ չափով, քան մյուս 3 կարգինը։ Բաժանման և վերաբաժանման ենթակա չէին ամառանոցները, այգիները, պարտեզները, բանջարանոցները և, ընդհանրապես, անհատական օգտագործման տակ եղած այլ հողերը։ Համայնքն իրավունք ուներ վարելահողերը վերաբաժանել, եթե կային բողոքներ և եթե այդ բողոքները հաստատվում էին համայնաժողովի կողմից։

Գյուղական համայնքը դարերի ընթացքում մշակել և կյանքում իրագործում էր հողերի, ջրերի, հարկերի, տուրքերի, ֆեոդալական այլ կարգի ու բնույթի պարհակների բաշխման յուրահատուկ կարգ, որը հայտնի էր համփա-չարեքային անունով։

Հողը, ջուրը, հարկերն ու տուրքերը բաշխելուց առաջ համայնաժողովը գյուղը բաժանում էր առանձին համփաների։ Համփան իր հերթին բաժանվում էր 4 հիմնական խմբերի՝ լրիվ, 3/4, 1/2 և 1/4 համփաներ։ Անհրաժեշտության դեպքում համփան բաժանվում էր 4 պաճեղների. չարեքը (1/4 մասը) կամ համփայի 1/16-րդ մասը կոչվում էր նաև կոտ։ Գյուղը համփաների բաժանելիս հաշվի էին առնվում պանազան հանգամանքներ՝ բնական ու աշխարհագրական պայմանները, հողի և ջրի առատությունը կամ նվազ լինելը, նրանց հեռու կամ մոտիկ լինելը ճանապարհներից, հողի բերքատվությունը և այլն։

Համփա-չարեքային կարգի առկայության դեպքում լրիվ, ամբողջական հողաբաժին ստացած ընտանիքը կոչվում էր լրիվ համփա, 3/4 հող ստացածը՝ եռեք պաճեղ, կեսը՝ կիսան կամ յարբամ համփա, իսկ 1/4-ը՝ պաճեղ կամ չարեք։ Ուշագրավ է, որ կես պաճեղ հողակտորը հանձնվում էր 2 անձից բաղկացած ընտանիքին, բայց նա միաժամանակ ծառայում էր նաև որպես հողաբաժիններ հավասարեցնող միավոր։ Մեծ և լրիվ համփա էր համարվում այն ընտանիքը, որն ուներ 16 անձ, կարող էր դուրս բերել մեկ գութան, 10—12 զույգ եզ և 10-ից ոչ պակաս բանվորական ձեռքեր։ 3/4 ընտանիքը պետք է ունենար 12, կեսը՝ 8, չարեքը՝ 4 և կես չարեքը կամ պաճեղը՝ 2 անձ։ Հողի, ջրի, հարկերի ու տուրքերի բաշխման հիմնական միավորը համարվում էր չարեքը բառորդը, այսինքն՝ 4 անձից բաղկացած ընտանիքը։ Սա էր պատճառը, որ այս կարգը կոչվում էր համփա-չարեքային։ Որքան մեծ էր համփան կամ նրա մեջ ընդգրկված անձերի թիվը, այնքան նա շատ հող էր ստանում և

ավելի շատ հարկեր էր վճարում։ Այսպես, օրինակ, եթե ընտանիքն ուներ 16 անձից ավելի շատ անդամներ, ասենք 32 կամ 48, ապա նա ստանում էր երկու և երեք անգամ ավելի շատ հող։

Հայաստանի ոչ բոլոր շրջաններում և նույնիսկ ոչ բոլոր համայնքներում էր առկա հողի բաշխման միայն համփա-չարեքային կարգը։ Այսպես, օրինակ, Ղաղախում, Շամշադինում հողը բաժանելիս հաշվի էին առնում ոչ թե առանձին ընտանիքների բոլոր անդամների, այլ միայն աշխատունակ անձերի, քաշող բանվորական ուժերի և նույնիսկ գյուղատնտեսական աշխատամիջոցների քանակը։ Ասենք, եթե ընտանիքը կարող էր դուրս բերել մեկ գութան, 10—12 զույգ բանող անասուն, համապատասխան քանակի հողագործներ, ապա այն համարվում էր լրիվ համփա, իսկ եթե առանձին գերդաստաններ կազմված էին ոչ թե 2, 4, 8, 16, այլ 1, 3, 5, 7 անձերից, այս դեպքում կենտ թվի վրա ավելացվում էր մեկ միավոր ևս և կազմվում էր չարեք, կես կամ լրիվ համփա։ Ակնհայտ է, որ այս դեպքում շահում էին կենտ թվով անդամներ ունեցող գերդաստանները, որովհետև ստանում էին մեկ անձին հասանելիք ավելորդ հողաբաժին։ Ավելի ուշագրավ է մի ուրիշ փաստ։ Եթե ընտանիքը բաղկացած էր զույգ թվով անդամներից, բայց չէր համապատասխանում համփա-չարեքային կարգին, այս դեպքում ավելացվում էր երկու անձ ևս։ Այսպես, եթե ընտանիքը բաղկացած էր 6 անձից, իրեն հասանելիք հողաբաժնից բացի ստանում էր նաև լրացուցիչ հողաբաժին և այն էլ երկու անձի հաշվի չափով։ Այս եղանակով էին բաժանում հողը, եթե գերդաստանը ուներ 10, 14, 18, 20 և ավելի անդամներ։

Համայնքն ինքը գիտակցորեն ստեղծել էր հողաբաժանման այս կարգը, որպեսզի սակավաուժ ընտանիքները ստանային ավելի շատ հող։ Սակայն հողաբաժանման այս կարգը դժվարությունների հետ էր կապված, որոնք զգալի էին առանձնապես այն բնակավայրերում, որտեղ շատ էր կենտ թվով անձեր ունեցող գերդաստանների թիվը և պակաս էր հողային ֆոնդը։ Այս էր պատճառը, որ նման պայմաններում հողաբաժանման ժամանակ դաժան պայքար էր սկսվում կենտ և զույգ թվով անդամներ ունեցող ծխերի միջև։ Այս ծանր վիճակից դուրս գալու համար համայնքը մշակել էր մի նոր ձև՝ հարաքաշություն։ Այս ձևի ժամանակ համայնքը միավորում էր սակավաթիվ, առանձնապես կենտ թվով անդամներ ունեցող գերդաստանները այն հաշվով, որպեսզի նրանք միանալով կազմեին մեկ լրիվ համփա-չարեք և համապատասխաններին հողաբաժանման կարգի հիմնական ձևերից որևէ մեկին։ Հարաքաշ գյուղացիները, տնտեսական խիստ կարիքից դրդված, մեծ մասամբ միանում, կազմում էին համփա և պարտավորվում էին օգնել մեկը մյուսին՝ համատեղ ուժերով մշակելու համփայի հողերը։ Համփա-չարեքային կարգը գործադրվում էր նաև արոտավայրերի, հանդերի բաժանման ու վերաբաժանման ժամանակ։ Ճիշտ է, արոտավայրերը դեռևս համարվում էին համայնքի անբաժանելի ունեցվածքը, բայց նրանցից կարող էին օգտվել և՛ անհատ գյուղացիներ, և՛ առանձին գերդաստաններ, և՛ նույնիսկ առանձին համայնքներ կամ մի քանի համայնք միասին։ Այդ պատճառով էլ համայնաժողովն ինքն էր առանձնացնում արոտավայրերը, որոշում նրանցից օգտվելու կարգը, ժամանակը, գանձվող տուրքերի չափերը և այլն։

Համփա-չարեքային կարգով հողերը բաժանելուց առաջ համայնքը ստորաբաժանվում էր տնտեսական առանձին միավորների (տասնյակ, դանկ,

դեհ և այլն)։ Տնտեսական յուրաքանչյուր միավոր իր հերթին առանձնացնում էր վստահելի անձ, որը պարտադիր կերպով իր մոտ պետք է ունենար որևէ առարկա՝ դանակ, կայծքար և այլն։ Առանձին միավորների կողմից վստահված անձերն իրենց հերթին իրենց մոտ եղած առարկաները հանձնում էին որևէ կողմնակի, բայց դարձյալ վստահելի անձի։ Հավաքելով այս առարկաները, կողմնակի անձը իր հերթին այն բաժանում էր նույն վստահելի անձերին, որոնք առարկաները պետք է թաղեին այդ նպատակով ընտրված հողի թմբերի մեջ։ Այս արարողությունը կատարելուց հետո վստահելի անձը բարձրաձայն հայտարարում էր նախորդ 12 մասերի բաժանված հողերի որևէ մասի անունը, իսկ մյուսը հողի թմբից հանում էր թաքցրած առարկաներից որևէ մեկը և համապատասխան հողակտորը հանձնվում էր տնտեսական այն միավորին որին պատկանող առարկան հանված էր թմբից։

Ստանալով համապատասխան հողակտոր, տասնյակը, դեհը, դանկը, նույն եղանակով հողակտորը բաժանում էր առանձին գերդաստանների վրա։ Հողաբաժին ստացող յուրաքանչյուր տնտեսատեր պարտավոր էր վստահելի անձին ներկայացնել որևէ առարկա։ Հողաբաժանմանը անմիջականորեն չմասնակցող այս անձը տնտեսատերերից հավաքված առարկաները խառնում էր իրար, թաղում հողաթմբում, բայց հետո հանում էր և մեկ ուղղությամբ շարում իրար կողքի, որով և որոշվում էր, թե այս կամ այն առարկայի տերը որտեղ և ում հողաբաժնի կողքին պետք է ստանա իրեն հասանելիք հողակտորը։ Բաժանելուց հետո առանձին ծխերին պատկանած հողը մյուսներից սահմանազատում էին արորով ակոսած նեղ շերտով։

Ավելի ուշագրավ էր համայնքի հոգատարությունը այն ընտանիքների նկատմամբ, որոնք չունեին տղամարդ աշխատողներ։ Համայնական հողը բաշխելուց առաջ համայնքը հաշվի էր առնում, թե քանի «բերան» կա տվյալ գերդաստանում, դրան ավելացնում էին նաև մեկ լրացուցիչ «բերան» և ապա հողը բաժանում այն հաշվով, որ այդ ընտանիքները որևէ չափով չտուժեն։ Այսպես, օրինակ, եթե համայնքն ուներ 50 ծուխ, որից միայն 45-ը ունեին աշխատող տղամարդիկ, մնացած 5 ընտանիքների վրա ավելացվում էր մեկական «բերան» և հողը բաժանվում էր 50 ծխերի վրա։ Բայց քիչ չէին դեպքերը, երբ հողը բաժանելիս կամ վերաբաժանելիս համայնքը հաշվի էր առնում միայն տղամարդկանց, սրանց աշխատունակության աստիճանը և ընտանեկան դրությունը։ Կային շատ համայնքներ, որտեղ գերդաստանի գլխավոր համարում էին միայն ամուսնացած տղամարդուն, եթե նա լիներ նույնիսկ 10—12 տարեկան։ Այս էր գլխավոր պատճառներից մեկը, որ ավելի շատ հողաբաժին ստանալու համար ամուսնացնում էին նույնիսկ անչափահաս արու զավակներին։ Ամուրի, բայց աշխատունակ տղամարդուն հաշվում էին որպես «կես գլուխ»[23]։

Այս փաստերը ցույց են տալիս, որ Հայաստանում մինչև XVIII դ. դեռևս շատ կենսունակ էին գյուղական համայնքները, որ ժողովրդական տնտեսության մեջ մեծ դեր էր խաղում համայնական գյուղացիությունը։ Համայնքնե-

---

23 *Ավելի մանրամասն տե՛ս* С. А. Егиазаров, Исследование по истории учреждений в Закавказье, ч. I, Сельская община, Казань, 1889; А. Ерицов. Экономический быт государственных крестьян Казахского уезда Елизаветпольской губернии (*տե՛ս* «Свод материалов по изучению быта гос. крестьян Закавказского края», ч. II, III).

ռում ընդգրկված գյուղացին, համայնքի նկատմամբ իր բոլոր պարտավորությունները կատարելուց և նրա համաձայնությունը ստանալուց հետո, կարող էր տնօրինել իրեն հասանելիք հողաբաժինը և ջուրը՝ այնպես, ինչպես ինքն էր ցանկանում։ Մեր ձեռքի տակ եղած մի շարք վկայություններ ցույց են տալիս, որ դեռևս «ազատ» համայնականի անձնական սեփականությունն էին համարվում նաև այսպես կոչված «դաստակերտային հողերը» կամ խամ ու խոպան այն հողահանդակները, որոնք գյուղացին մշակում, ցանկապատում և դարձնում էր բերքատու։

Հողի և ջրի մշտական կարիքը գյուղացիներին ստիպում էր անտառներից կամ լեռնային կիրճերից նվաճել առանձին հողակտորներ, իրենց և ընտանիքի անդամների անձնական աշխատանքով ու սեփական միջոցներով մշակել, տընկել այգիներ, պտղատու ծառեր և ապա դարձնել անձնական սեփականություն։ Համայնքը այն դեպքում միայն կարող էր «ձեռք զարկել» այս կարգի հողերին, եթե գյուղը հողի մեծ կարիք ուներ և, որ գլխավորն է, եթե գյուղացու կողմից «կլորացված», ցանկապատված հողը ազատ էր ցանքսերից, եթե այն մշակելու համար մեծ միջոցներ և շատ աշխատանք չէր գործադրվել։ Ավելին, եթե համայնքը ստիպված բռնագրավում էր այս կարգի հողերը, ապա նրա նախկին տիրոջը իրավունք էր վերապահվում 25—30 տարի լրացուցիչ օգտվել այդ հողամասից ստացված բերքի մի մասից։ Մի շարք փաստեր ցույց են տալիս, որ դաշտային շրջաններում յուրաքանչյուր համայնական ուներ մեկ սոմարի չափ հող, որտեղ կարելի էր ցանել 10 լիտր ցորեն։ Յուրաքանչյուր լրիվ համփա (16 անձ) ուներ $3^1/_2$ դեսյատինից ոչ ավելի հող։

Հողի խիստ կարիքը հողազուրկ գյուղացուն ստիպում էր կա՛մ դիմելու վարձվորության, կա՛մ էլ լքելու համայնքը և աշխատանք որոնելու դրսում։ Սակայն երկրի այն մասերում, որտեղ դեռ ուժեղ և կենսունակ էին համայնքները, որտեղ դեռևս բացակայում էին կալվածատիրական տիպի տնտեսությունները, որտեղ չկային բարենպաստ պայմաններ ֆեոդալական հարաբերությունների զարգացման համար, համայնական հողատիրությունը հանդիսանում էր հողատիրության տիրապետող ձևը։

Բոլորովին այլ էր վիճակը երկրի այն մասերում, որտեղ կատարվում էր հակառակ պրոցեսը. այդպիսի շրջաններում արագ թափով զարգացող կալվածատիրական տնտեսությունը պահանջում էր հողային նոր տարածություններ և աշխատող ձեռքեր։ Չնայած համայնքի և առանձին համայնականների համառ դիմադրությանը, շատ հաճախ նաև դինված պայքարին, այնուամենայնիվ, աշխարհիկ և հոգևոր ֆեոդալներն իրենց կալվածքները լայնացնում էին առանձնապես այն համայնքների և համայնականների հողերի հաշվին, որոնք արտաքին և ներքին անբարենպաստ պայմանների պատճառով կորցնում էին իրենց հողաբաժինները և անջատվում սեփական արտադրամիջոցներից։ Ավելին, հողատեր-կալվածատերերը, յուրացնելով համայնական հողերը, շատ հաճախ, այն էլ խիստ դաժան պայմաններով, դրանք հանձնում էին նախկին տերերին մշակելու՝ հարկեր ու տուրքեր վճարելու և պարհակներ կատարելու պայմանով։ Քիչ չէին դեպքերը, երբ հողատեր-կալվածատերերը ֆեոդալական բոլոր պարտավորությունների կատարման պատասխանատվությունը դնում էին համայնքի վրա։ Այս էր հիմնական պատճառը, որ համայնքն իր անդամներին բաժանում էր ոչ միայն հողերը, այլև հարկերը, տուրքերը, պարհակները։

Համայնքում ընդգրկված գյուղացին բազմաթիվ կապերով ամրացված էր նրան։ Համայնականը իրավունք չուներ թողնել համայնքը, փոխել բնակավայրը և նույնիսկ աշխատանքի բնույթը, վաճառել բնակարանը, տնամերձ հողերը և համայնքից ստացած հողաբաժինը, եթե չկար համայնքի նախնական համաձայնությունը։ Համայնականը իրավունք չուներ լքելու համայնքը մանավանդ այն դեպքում, եթե չէր կատարել հարկային պարտավորությունները։ Հայտնի է, որ հարկային բոլոր պարտավորությունները շատ հաճախ դրվում էին համայնքի վրա։ Այսպես, օրինակ, յուրաքանչյուր տարի խանի կամ նույնիսկ առանձին մուլքադար-թիուլդարի հարկահան-աշխարհագիրները մեկնում էին հողատիրոջը ենթակա վայրերը, հաշվի էին առնում հարկային բոլոր օբյեկտները, համայնքներում ընդգրկված ծխերի և գլուխների քանակը, նրանց վճարունակության աստիճանը։ Տուրքակոպարային կամ հարկադրույքային միավորը համարում էին ծուխը և գլուխները. ծխերից գանձում էին ծխահարկ կամ հողային հարկ, գլուխներից՝ գլխահարկ։ Հարկամատյանները կազմելուց հետո սարդարը կամ հողատեր-կալվածատերը այն հանձնում էր համայնքների ավագներին և պարտավորեցնում ժամանակին գանձել հարկերը։ Գեղջավագները, ստանալով գրավոր կամ բանավոր կարգադրություն, իրենց հերթին հարկերն ու տուրքերը բաշխում էին ոչ թե առանձին համայնականների, այլ տնտեսական առանձին միավորների՝ համփայի, տասնյակի, խմբի վրա։ Այս եղանակով բաշխելով ու գանձելով հարկերն ու տուրքերը, համայնքը ձգտում էր հասնել հավասարության, այսինքն՝ ով շատ հող ուներ, վճարում էր ավելի շատ հարկեր։ Եթե համայնքների վրա դրված հարկերն ու տուրքերը գանձվում էին սարդարի կամ խանի օգտին, ապա այս դեպքում գեղջավագի հետ հավասար պատասխանատու էին նաև մուլքադար-թիուլդարները։

Այս էր հիմնական պատճառը, որ ֆեոդալական հասարակարգում համայնքը հանդիսանում էր ոչ միայն իր անդամների շահերի կոլեկտիվ պաշտպանը, այլև ֆեոդալական շահագործման ամենանպատակահարմար և շահավետ կազմակերպությունը։ Համայնքն էր, որ կազմակերպում և իրականացնում էր հասարակական մասշտաբի ձրի և հարկադիր պարհակները, կոլեկտիվ կերպով անցկացնում էր ջրանցք-առուներ, կառուցում պետական ու հասարակական նշանակություն ունեցող կառույցներ՝ ճանապարհներ, կամուրջներ, բերդ-ամրոցներ, վանքեր, եկեղեցիներ, ռազմական արշավանքների ժամանակ դուրս էր բերում գումակ, սնունդ էր մատակարարում գյուղի մոտով անցնող ռազմական ուժերին, պետական ու զինվորական բազմաթիվ պաշտոնյաներին. նա էր, որ ստիպում էր համայնականներին իրենց անձնական աշխատանքով և քաշող ուժով մշակել հողատեր-ֆեոդալների կալվածքները, ժամանակին վճարել հարկերն ու տուրքերը, կոլեկտիվ կերպով կոռ կատարել և այլն։ Այս պատճառով ոչ միայն կենտրոնական պետությունը, այլև աշխարհիկ և հոգևոր ֆեոդալները ևս շահագրգռված էին, որ համայնքը պահպանվի։ Առանց գյուղական համայնքների հողատերերը պետք է գործադրեին հսկայական ջանքեր, ծախսեին մեծ միջոցներ ու աշխատանք, որպեսզի բաժանեին և վերաբաժանեին հողն ու ջուրը, նշանակեին ու գանձեին հարկերն ու տուրքերը, կազմակերպեին պարհակներ, հարկադիր և անվճար այլ աշխատանքներ։ Համայնքների գոյությունը հանդուրժում էին հատկապես այն հողատեր-ֆեոդալները, որոնք երբեք չունեին կամ չկազմակերպեցին իրենց սեփական ֆեոդալական տնտեսությունը։ Սրանք գերադասում էին իրենց կալ-

վածքները բաժանել առանձին մասերի և հանձնել կա՛մ համայնքներին, կա՛մ անհատ համայնականներին մշակելու՝ հարկեր ու տուրքեր վճարելու պայմանով։

Այսպիսով, չնայած օսմանյան և պարսկական բիրտ տիրակալությանը, հայկական գյուղական համայնքների մի մասը դեռևս պահպանում էր իր գոյությունը և նրա մեջ ընդգրկված համայնական գյուղացիությունը երկրի էկոնոմիկայում խաղում էր կարևոր դեր։ Համայնքներում ընդգրկված շինականները չնայած տուրքապարտ էին, ենթակա էին ֆեոդալական կախման, կատարում էին ծանր պարհակներ, բայց դեռևս անձնապես ազատ էին։ Եթե նրանք կատարում էին պետության և համայնքի նկատմամբ իրենց ունեցած պարտավորությունները և ստանում էին համայնքի համաձայնությունը, ոչ միայն կարող էին օտարել իրենց հողաբաժինները, այլև փոխադրվել ու բնակություն հաստատել այլ բնակավայրերում։

Այսպիսով, Հայաստանում աշխարհիկ և հոգևոր կալվածատիրական տընտեսության, հողի և ջրի նկատմամբ մասնավոր սեփականության աճի ու զարգացման պայմաններում շատ համայնքներ քայքայվեցին, բայց նրանց զգալի մասը շարունակեց պահպանել իր գոյությունը։ Վերջիններս դեռևս կենսունակ կազմակերպություններ էին և համառ, հարատև ու ծանր պայքար էին մղում հողատեր-ֆեոդալների՝ համայնքի նկատմամբ ձեռնարկած ոտընձգությունների դեմ։ Թեև այս պայքարում համայնքների մի մասը կազմալուծվում էր, բայց հաճախ վերականգնվում էր նույն տեղում և նույնիսկ նույն անվան տակ։ Առանձին համայնքներ իրենց մեջ ընդգրկում էին մայր գյուղեր կամ մի շարք դուստր գյուղեր, շեներ, բնակավայրեր։

Հայաստանում դեռևս մեծ տոկոս էին կազմում «հին հայրենի տէրք», անձնապես-իրավապես ազատ համայնական գյուղացիները։ Սրանց պետության և հողատեր-ֆեոդալների հարաբերությունները ինչպես նախկինում, այնպես էլ այժմ որոշվում էին սոսկ տուրքապարտությամբ։ Հետևաբար Հայաստանում համայնական գյուղացիությունը զգալի տոկոս էր կազմում, երկրի տնտեսության մեջ մեծ դեր էր խաղում և ճորտացված ու հողին ամրացված չէր։

СЕЛЬСКАЯ ОБЩИНА В АРМЕНИИ В XV—XVIII ВЕКАХ

Проф. С. Е. АКОПЯН

(Резюме)

На основании первоисточников сельские общины в Армении можно подразделить на четыре основные группы.

В первую группу входят те общины, в которых общинные пашни выделялись семьям общинников или отдельным общинникам и вместе с их приусадебными участками закреплялись за ними на правах временного землепользования.

В общинах второй группы часть пахотных земель распределялась и перераспределялась между общинниками и передавалась им на правах наследственной собственности. На этих земельных участках некоторые общинники своим трудом и средствами производства создавали соб-

ственные хозяйства и полученные продукты (после выплаты налогов и податей) реализовали как частную собственность. Общины этой группы были широко представлены в тех центральных, плодотворных черноземных районах страны с обилием оросительной воды, в которых, кроме земледелия, занимались также садоводством и выращиванием технических культур.

Общины третьей группы были широко представлены в горных и предгорных районах. Здесь все еще господствовала коллективная, общинная форма земельной собственности, имелись обширные земельные площади, но общины были немногочисленны. Это основная причина отсутствия какого-либо ограничения земельных площадей: как община в целом, так и отдельные семейства могли использовать столько земли, сколько позволяли их экономические возможности.

Весьма многочисленными и жизнеспособными были общины четвертой группы, которые формировались в районах, сильно пострадавших от нашествий иноземных захватчиков. Образовавшиеся в этих местах общины временно освобождались от податей (зачастую на 5—15 лет). По окончании этого срока льготы упразднялись.

Со временем, благодаря росту и развитию частной собственности светских и духовных феодалов на землю и воду, многие общины разлагались, однако некоторая часть их не только продолжает существовать, но и ведет упорную продолжительную борьбу против посягательств феодалов на права общины.